ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 373 – Ա                                                                 04 հոկտեմբերի 2019 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԻՆԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇԻՐԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինարի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N Ն/2897-2019 և նույն վարչության պետի տեղակալ Սևակ Դվոյանի 2019 թվականի հոկտեմբերի 4-ի Ն/3009-2019 զեկուցագրերը

**կարգադրում եմ՝**

1. 2019 թվականի հոկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինարի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շիրակ Մելքոնյանի նկատմամբ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

04.10.2019

ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ                    SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ